

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

264 247

Պրոլետարիա բարու յեկեների միացե՛ք


# ՅՓՈՍԵ ԳՅՈՒՂՈՒՄ

(ԻՆՉՊԵՍ ՆՐԱՆ ԿԱՌՈՒՑԵԼ, ԱՄՐԱՑՆԵԼ ՅԵՎ ԲԱՐԵԼԱՎԵԼ)

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆ ԲՈՒՐ ՅԵՎՀԵՆԻՔ, ՄԻԱՑԵ

# ԵՓՈՍԸ ԳՅՈՒՂՈՒՄ

(ԽՆԴՐԱՆ ԿԱՌՈՒՅԹԵԼ, ԱՄՐԱՑՆԵԼ ՅԵՎ ԲԱՐԵԼԱՎԵԼ)



**ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ ՆԱՄԱԿՆԵՐԻ ՁՐԻ  
ՈՒՂԱՐԿՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

Ս. Խ. Հ. Մ. Փողկոմիորհի 20 հուլիսի 1923 թվի  
փորոշմամբ հաստատված ե կարմիր բանակայիններին  
հասցեյագրված մինչև 20 գրամմ քաշող նամակների մո-  
տավորապես մի նամակի թղթի և ծրարի քաշ ունեցող և  
փոստային քարտերի ընդունումը:

Ամեն մի կարմիր բանակային ընկերոջ նամակ գրող  
ցանկացող իրավունք ունի առանց փոստային նամականիշ  
կպցնելու ուղարկել անսահմանափակ քանակությամբ նա-  
մակներ. բավական ե միայն նամակի վրա ճիշտ հասցեն  
զրել. այսինքն ցույց տալ՝ ա) քաղաքը կամ վայրը. վոր-  
տեղ ծառայում ե ավյալ կարմիր բանակայինը, բ) զին-  
վորական մասը կամ հիմնարկը կարմիր բանակի, վորտեղ  
նա գտնվում ե, գ) հասցեյատերի բանակային կոչումը և  
նրա անունը հայրանունը ու ազգը. որինակ՝

**Յ և ր ե ա ն**

Հայկական Առանձին Կապի Վաշտ

Կարմիր Բանակային

Արտաշես Հակոբի ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ



11-23946915

Տպագրական Տրեստի 2-րդ Տպարան. Յերեվան

Տիրագ. 2000.

գրառ. 1563

պատ. №1134



Յեթե հասցեյում չի մտանանշված «Կարմիր Բա-  
նակային» կամ նամակը հասցեյագրված ե վոչ թե զին-  
վորական մասը, այլ մասնավոր բանակարան— այդպիսի  
նամակը ձրիաբար չի արվի հասցեյատիրոջը: Կիսագրա-

գիտության գեղքում, կամ յեթե չի իմանում զրելու ձեր, զյուղական հիմնարկություններում հասցեն կարող է զրել փոստի աշխատակիցը առանց վարձարության:

## ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆԻՑ ՍՏԱՑՎՈՂ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Ս. Խ. Հ. Մ. Ժողկումխորհի 19 մայիսի 1924 թ. վորշմամբ ամեն մի կարմիր բանակայինի և կարմիր սպամանավայինի իրավունք և արվում ամեն ամիս ձրիարար յերեք նամակ կամ փոստքարտ ուղարկելու: Վորագեսպի փոստը կարմիր բանակայինների նամակները ձրիարար ուղարկի, ամեն մի զինվոր պարտավոր և կատարել հետեւյալը՝ ա) նամակի վերևի մասում զրել «Կարմիր Բանակայինի»:

բ) նամակը չձգել փոստարկղ այլ հանձնել յուր մասի զրասենյակը, նշանակները (гербовая печать) դնելու կամ զորամասի ցրիչ մատյանով փոստին հանձնելու համար:

## ՓՈՍՏԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Բանվորները և գիւղացիները կարիք են զգում սերտ կապերի, միահամուռ ուժերով կառուցելու Խորհրդային Միության անտեսությունը. Գորպեսզի հեշտությամբ վերացվի անզրագիտությունը և այն խավարը, վորում դարերի ընթացքում տանջվում եր աշխատավոր դասակարգը չնորհիվ կալվածատերերի և կապիտալիստների: Իսկ վորպեսզի բարձրացնել գիտության մակարդակը, անհրաժեշտ են զրեր և լրագրեր:

Գրքեր գյուղատնտեսության, հողագործության, անտառապահության, թունավաճության և այլն: Անհրաժեշտ և նաև այնպիսի գրականություն, վորոր կը բացատրի աշխատավոր դասակարգին գյուղատնտեսության

մերենաների ողուտք և արակառների ոգտագործումը: Գրքերից վոչ պակաս զյուղացուն անհրաժեշտ և նաև լրտղիրը: Լրագիրն ե, վոր պարզաբանում ե՝ զյուղացուներին վերաբերվող բոլոր հասարակական և քաղաքական բարդ հարցերը, նաև բացարձում և պետության որենքները, նաև ցրում և զարերի խավարը, վորը ժառանգություն և մնացել կալվածատիրության և ցարիզմի որերից: Լրագիրն ե, վոր ոգնում և զյուղացուն նրան տորյա կյանքում, աշխատանքի բոլոր ասպարեզում, տալով խորհուրդներ զյուղատնտեսությունից: Նա ուրախությամբ պատասխանում և տեղերից առաջարկվող զյուղացիների հարցերին: Լրագիրը և զիրքը պետք են զյուղացուն. իսկ վորպեսզի այդպիսիները ընկնեն դրանց ձեռքը, անհրաժեշտ և կանոնավոր փոստային կապակցություն ունենալ բոլոր գավառակների և զյուղերի հետ: Բայց գժեազդաբար ներկայումս յեր զյուղերում փոստալին բաժանմունքները շատ սակավ են: 30—50 զյուղերին մի փոստային հիմնարկություն և ընկենում: Հենց դա յե պատճառը, վոր լրագիրը և զիրքը շատ գանգաղ են գնում: Իսկ կան տեղեր, վոր մինչև անգամ անկանոն են տեղ հասնում: Յեվ բացի դրանից մի կապոց (պասիլկա) կամ զրամական փոխադրություն ստանալու համար հարկավոր և ահազին ձանապարհ անցնել: Դրանով ել հենց բացարձում ե, վոր զյուղացին քիչ զրում և քիչ ել լրագիր և ստանում: Այսպես որինակ, զյուղի բնակչության ընդհանուր քանակությունը յեթե վերցնենք, ութ զյուղացուն ամսական մի փոստային թղթակցություն և ընկնում թե զյուղից ուղարկված և թե զյուղում ստացվող:

Այդ ևս ցարտական միապետությունից ստանձնված ժառանգություն ե, յերբ փոստի յեկամուտները պետությունը գործադրում եր իր կարիքի համար, կուզեք (որին անկապացներ և ժանդարմաներ պահելու): Բայց ընալ վոչ զյուղական փոստերը զարդացնելուն:

Խորհրդային իշխանությունը անդյալ տարիներում զբաղված լինելով միջազգային կապիտալի և ներքին քաղածության գեմ պայքար մղելով, հստափորություն չի ունեցել արժանի բաժին հատկացնել գյուղական փոստի զարգացման գործին: Հենց ներկա մամենառում Պետությունը մեծ գժվարությունների յե հանդիպում այդ գործը իրականացնելում, վորովհետեւ շատ չարչարանք և միջոցներ են հարկավոր տնտեսական խորը վերքերը բուժելու համար: Չնայած այդ ամենին, Խորհրդավին իշխանությունը անում ե այն բոլորը, ինչ վոր թույլ են տալիս նրա մատադ ուժերը, նա աշխատում ե նմանապես ամրացնել և ուժեղացնել այն ահենը, ինչ վոր նպաստում ե գյուղի և քաղաքի շաղկապին, նույն թվում նաև փոստը:

Կոմունիստական կուսակցության 13-րդ համագումարը խնդիր ե գրել առանովեցնել գյուղական լրագրների կանոնավոր առաքման գործը: Բայց այդ իրագործել կարելի յե միմիայն այն բոլոր անձանց միահամուռ ուժերով, վորոնց միջոցով լրագիրը տեղ ե հասնում: Տեսնենք, ինչպես ե լրագիրը և գիրքը ներկայումս ընկնում գյուղացու ձեռքը, թե մեկը և թե մյուսը կանոնավոր կերպով հասնում են մինչև վերջին փոստի հիմնարկը: Այստեղ ստացված լրագիրները և ամսագրերը հանձնվում են գյուղագործներին և անդամություններին(փոստատարներին:) Այդ լիազորները ընդունում են թե իրենց և թե շրջակա գյուղերի ամբողջ թղթակցությունը: Բայց գժբաղատությունը նրանում ե, վոր գրանք փոստ են ներկայանում շատ հազվագյուտ և անկանոն ու ստացված թղթակցությունը շատ հաճախ շարաթներով մնում են ընկած շրջործելուների կամ գյուղագործների գրասենյակներում, մինչև վոր չի պատահում տվյալ գյուղը զնացող պատահան ձամբորդ, վորին և հանձնվում ե նամակը կամ լրագիրը բայց պտտկաններույն հասցնելու համար: Հաղվագյուտ չեն նաև այդ կերպ ուղարկվելիք նամակների և լրագրների կորուստի գեպքերը: Վորպեսզի ազատվել

գյուղական նամակներ և լրագրեր հանձնող ալդ պատահական միջնորդներից, պետք ե ավելացնել գյուղերում փոստային հիմնարկությունների քանակը, բայց արդյոք փոստի վարչական մարմինը ի վիճակի յե յուր վրա վերցնելու այդ մեծ գործը ներկայումս (առ 1-ն Ապրիլի 24 թ.) մեզ մոտ ամբողջ Ս. Խ. Ռ.-ում կամ 7125 փոստալին հիմնարկություններ և 1920 ոժանդակիչ փոստային կետեր: Միջին հաշվով 2500 վերստ տարածության ընկնում ե մի հիմնարկություն, այսինքն գյուղերի միջին տարածությունը մոտագայ փոստից մոտավորապես 25 վերստ ե: Վորպեսզի այդ տարածությունը մի քիչ պակասեցնել և հասցնել գոնե մինչև 10 վերստի, գարձյալ պետք ե փոստային հիմնարկությունների քանակը ավելացնել 6 անգամ, այսինքն պետք ե բանալ 3600 փոստային նոր հիմնարկություններ: Յուրաքանչյուր փոստային հիմնարկության ծախսը պետական միջոցներով համառում ե 900 ռուբլու տարեկան, իսկ յեթե շենքը, վառելիքը և փոստի տեղափոխման միջոցները հատկացրվեն ձրիաբար—մոտ 500 ռուբլի տարեկան:

36,000 փոստային բաժանմունքների բացումը առաջի պարագայում կպահանջեր 32.000.000 ռուբլի, իսկ յերկրորդում 18.000.000 ռուբլ. տարեկան:

Այդպիսի մեծ ծախսը ինարկե ներկայումս կառավարության ուժերից վեր ե և այդ յերկում ե՝ նրանից, վոր այս տարի կապակցության բոլոր ձյուղերի համար (փոստ, հեռագիր և ռադիո) բաց ե թողնված 42.000.000 ռուբլի: Այդ նոր բացվելիք փոստային բաժանմունքների յեկամուտը բարեհաջող պայմաններում կծածկեյին ամբողջ ծախսի մի քառորդ մասը, իսկ ավելի հավանական ե, վոր ամբողջ յեկամուտը կը կազմեր միայն ծախսի մի 10-րդ մասը, իսկ մնացյալ <sup>9/10</sup>-ականը պետք ե մուծվեր պետական լրամարկղից: Բայց պետությունը պարտավոր ե, ինչպես առակն ե ասում, վոտքերը վերմակի չափով պարզել և ծախսերը հարմարեցնել յեկամուտին, միա-

ժամանակ կրծատելով առաջինը մինչև ծայրահեղ աստի-  
ճանի:

Հիմա հարց է տրվում ապա ինչ ուղի բռնենք, վոր-  
պեսզի փոստը առանց վարչական մարմին ուժից վեր  
ծախսեր հասցնելու կարողանա մտնել գյուղական խորքե-  
րը և հարավորություն տա գյուղացիությանը առանց  
ժամանակի և աշխատանքի զգալի վատնման ոգավել փոս-  
տից: Դրա համար կան մի քանի ձիեր, վորոնցից ամեն  
մեկը կարելի յե կիրառել բայ տեղական պայմանների:  
Ամենից հեշտ կերպով կարելի է աջակցել այն գյուղերին,  
վորոնք ընկած են մոտակա փոստային հիմնարկություն-  
ների կամ ձանապարհների մոտ:

Այդ նպատակով վարչական մարմինը գործադրում է  
շարժական փոստեր:

## ՇԱՐԺԱԿԱՆ ՓՈՍՏ

Ս.Խ.Հ. Միության մեջ ունենք 165,000 վերստ  
տարածությամբ փոստային ուղիներ: Այդ ուղիները մի  
փոստային վայրից մինչև մյուսին համեմ են  
մի շարք գյուղերի միջով կամ շատ թե քիչ նրանց մո-  
տով:

Պետք է այնպես հարմարեցնել, վորպեսզի այդ ուղի-  
ները ընդունելի շատ գյուղեր և շրջաններ: Այն  
ներքավառներում, վորտեղ ընկած են փոքր ուղիներ,  
իսկ գյուղերը ունեն խիստ դասավորություն, կարելի յե  
փոստը նախ ուղարկել մի շարք գյուղերով, իսկ վերա-  
դարձին մի ուրիշ գյուղերով, ստեղծելով փոստային ո-  
ղակ: Այն շրջաններում, վորտեղ գյուղերը հաճախ չեն  
պատահում և ունեն շղթայաձև դասավորություն, ներք-  
գավառային փոստերը պետք է ուղարկել այնպես, վոր-  
պեսզի այդպիսին անցնի առանց բացառության բոլոր  
գյուղերով: Յուրանքանչյուր այդպիսի գյուղում պետք է  
կախել մի փոստային արկղ և ամեն մի այդպիսի գյու-


ղում փոստը պետք է կանգ առնի մի քառորդ ժամ ու  
կատարի փոստային նամականիշների վաճառում, հաստ-  
րակ և պատվիրված նամակների, կապոցների և գրամտկան  
փոխադրումների ընդուներություն: Փոստի կանգառման  
կետերում պետք է կախել հայտարարություն փոստի  
տեղ հառնելու ժամանակի մասին և հասցեագրված վայ-  
րից անցնելու գեղքից խուսափելու համար պետք է  
ցույց տալ թե վորտեղ պետք և հանձնվի տվյալ թղթակ-  
ցությունը (ցույց տալ շարժական փոստի յելակետը):

Փոստային ճանապարհների մոտ դասավորված գյու-  
ղեր ընդունենք կը լինեն 15-20.000 վոչ ավել անա-  
գո կը լինի մեր առաջին քայլը փոստը գյուղին մոտե-  
ցնելու գործի ասպարեզում: Այդ գործը մենք կարող  
ենք կատարել հենց հիմա, զրա համար մեզ հարկավոր է  
միմիայն մի քիչ ավելացնենք մեր ծախսերը շարժական  
փոստերը ուղեկցող անձնավորություններ գտնելու և  
նրանց ճանապարհածախսները հոգալու համար: Այդպիսով  
շարժական փոստի հետ զլուզ կը մանեն վոչ թե միմի-  
այն լրագիրը, նամակը, փոխադրումները և կապոցները,  
այլ մինչև անզամ կենդանի տեղայի մարդ, վորը կարող  
կլինի գյուղացուն շատ բան պարզաբանել և բացարել  
նրանց հետաքրքրող զանազան հարցեր: Նա մինչև ան-  
զամ կարող է հանձն առնել գյուղացու համար զանազան  
տեղեկություններ հավաքել զրանց պատասխանը մյուս  
փոստով բերել կամ ցույց տալ նրանց, թե վորտեղ և  
ում կարելի յե զիմել այս կամ այն գործով:

Շարժական փոստերը ներավոր են միմիայն ներք-  
գավառային փոստային ճանապարհներում, վորովհետեւ  
կանգ առնելով ամեն մի գյուղում անհրաժեշտորեն կու-  
շանաւ: Նահանգներական և գավառական քաղաքների միջև  
ընկած ճանապարհով փոստը պետք է ընթանա ավելի տ-  
րագ և այնտեղ արդեն կես կամ մի ժամ ուշացումը ան-  
թույլարելի յե: Բայց «զա չի նշանակում, համենայն  
զեպս, վոր նա չի կարող հոգալ ճանապարհի մոտ գըտ-

նըփող զյուղերի կարիքները: Առաջինը՝ բոլոր այդպիսի գյուղերում պետք է զրված լինեն յերկու բաժին ունեցող փոստային արկղները. առաջինի մեջ բնակչությունը կը ձգի յուր նամակները և այդաեղից անցնող փոստատարը հավաքի կը տանի յուր հետ, իսկ մյուս բաժնում կղնի գյուղին հասցեազգրված նամակները, փաթեթները, ծանուցազբերը և լրագիրները: Դյուղը յուր հերթին պետք է ունենա մի լիազոր, վորի մոտ կը լինեն այդ բաժնի բանալիները, վորպեսզի հետո ստացված թղթակցությունները բաժանի հասարակության ըստ իրենց հասցեների: Իսկ յեթե վորկից զյուղ մեծ քանակությամբ փոստային կապոցներ կամ թղթակցություններ ե ստանում, կարող են իրենց փոստը փոկ պայուսակով ստանալ և ուղարկել նույն փոստ ուղեկցող փոստատարի միջոցով: Դրա համար պետք է իրենց զյուղի լիազորին իրավունք տալ փոխանակելու այդպիսի պայուսակներ և զալ համաձայնության մոտագա փոստային բաժանմունքի հետ: Փոստային արկղի պարզումը և պայուսակների փոխանակումը կտևի ընդամենը 5-10 րոպե, վորը կարող յեն կատարել նահանգային և գավառային ծանր փոստերը: Փորձենք ապա պարզել ողակածն փոստերի կազմակերպման ժամանակը: Այստեղ դաշնուում ենք ընթերցողի ուշադրությունը մի բանի վրա, վոր ողակածն փոստը չի կարելի անպայման կապել շարժական փոստի հետ: Շարժական փոստը կարող է լինել բոլոր ներքավառային թե ուղիղ և թե ողակածն ճանապարհ ների վրա:

ԵԵՐԿԳԱՎՈՒՍԵԿԻՆ ՈՂԱԿԱԶԵՎ ՓՈՍՏԵՐԻ ՈՐԻՇԱԿՆԵՐ



⊕ Պավառային կենցողն  
● պօստային բաժանմունք  
× զյուղեր

Յենթագրենք զավառային քաղաքից շարժական փոստը զնում է Ա. Բ. և Գ. փոստային բաժանմունքները. ճանապարհին նա փոստը փոխանակել է հիշյալ հիմնարկությունների հետ: Վերադառնալ նույն ուղիով նշանակում է աննապատակ 62 վերստ ճանապարհ անցնել, ավելի լավ է զյուղից ուղղակի անցնել զավառային քաղաքը և ճանապարհին փոստը փոխանակել մի բանի զյուղերի հետ, վորոնք չեն մտնում ընդհանուր փոստային ցանցի մեջ: Տեսնենք ինչ կատացվի զբանից՝ յեթե փոստը ողակ չկատարի, այլ Ա. զյուղից ուղղակի անցնի զավառային քաղաք, ճանապարհածախս պետք է վճարել 82 վերստի համար, իսկ յեթե անցնի ողակածն այսինքն Բ և Գ զյուղերով պետք է վճարել 124 վերստի ճանապարհածախս և բացի զբանից ճանապարհի մի բանի զյուղերն ել կման առանց փոստային կապի: Այդ ձեր բացասական կողմն ե՝ յեթե Բ զյուղից Ա. զյուղը կամ առհասարկ այն զյուղերում, վորտեղ փոստը անցել ե՝ նամակ լինի. այդպիսին տեղ կը համնի վորոշ հապաղումով և զավառային քաղաք կտարվի հետեւյալ փոստով:

Յերկրորդ որինակ՝ շարժական փոստը զավառաքա-

զաքից անցնում ե Մ և Կ փոստային բաժանմունքները: Ճանապարհին նա հոգում ե ուղեկից գյուղերի փոստային կարիքները (նշանակած խաչիկներով): Կ-ին համելուց առհասարակ փոստը հետ ե գառնում նույն ճանապարհով, անելով ընդամենը 80 վերտու: Ավելի նպատակահարժար է անցնել մյուս գյուղերով, վորտեղ փոստային կառակցության ցանց չկա և հոգակ նրանց փոստային կարիքները. ճիշտ ե, ճանապարհը կյերկարի 15-20 վերտու, բայց փոխարենը փոստային ցանցի մեջ կմացվին մի քանի նոր գյուղեր:

Յերբորդ որինակ՝ գավառային քաղաքից կամ յերկաթուղային գծի մոտից ճյուղավորվում են յերկու փոստային ճանապարհներ. դիցուք թե Խ(35վ) և Ա) 36): Շարժական փոստերի թղթակցությունը փոխանակելով ուղեկից գյուղերի և միջանկյալ Ն. և Գ. բաժանմունքների հետ, առհասարակ վերադառնում ե նույն ճանապարհով: Փոստի հետ ու առաջ անցած առածությունը միասին վերցրած հավասարվում է 142 վերտու: Յեթե փոստը ուղարկել յելակետ Գ-ից գեպի Ս և հետո ուղակի Խ. ուղեկից գյուղերին ծառայություն մատակարարելով, հետո Խ-ից գեպի Ն և գավառաբաղաք — փոստի անցած ընդհանուր տարածությունը կը ճանաչ 44 վերտու և բացի գրանից փոստային ցանցի մեջ ձգած կլինենք մի քանի նոր գյուղեր:

Այսուղից գալիս ենք այն յեղբակացության, վոր փոստային ողակը կրածում և փոստի անցնելիք ճանապարհի աարածությունը և ձգում և փոստային ցանցի մեջ մի շարք նոր գյուղեր: Փոստային ողակը վոչ մի գեպում 100 վերտուց ավելի չպետք ե լինի: Ավելի լավ ե յեթե նա պակաս լինի: Ողակածի փոստի ուղղությունը մինչև ընտրելը պետք է ուսումնասիրել գյուղերի դաստիքումը, հետազոտել ճանապարհը և այլն:

## ՈԺԱՆԴԱԿԻՉ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԵՏԵՐ ՅԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այժմ անցնենք գյուղական կառակցության մյուս ձևերին: Փոստային բաժանմունքները գյուղում շատ հաճախ այնքան ել ծանրաբեռնված չեն լինում աշխատանքով: Կան այնպիսի գյուղեր, վորտեղ փոստային բաժանմունքում որեկան 10-15 նամակ կամ լրացիք և փոխանակվում: Այդպիսի չնչին աշխատանքի համար միտք չունի հատուկ փոստային աշխատակից ունենալ, չենք վարձել և այն: Ահա թե ինչու փոստային վարչական մարմնները բաց և անում հասարակ ձեր փոստային կետեր, վորտեղ այդ հասարակ գործը կարող է անել զործի հետ միջանկյալ գյուղասորհրդի աշխատակիցը, ուսուցիչը, խօրձիթ-ընթերցարանի վարիչը և կոոպերատիվի աշխատակիցը, վորտունց փոստային վարչական մարմններ վարձապում և նայած աշխատանքի քանակին 5 - 12 ուուր. ամսական:

Այն գյուղերում, վորտեղ ամբողջ գործունեյության պատասխանատվությունը վերցնում է յուր վրա մի ամբողջ հիմնարկություն. (որինակ գյուղխորհուրդը կամ շրջգործկոմը) բացում է ոժանդակիչ փոստային կետ, իսկ այնտեղ, վորտեղ փոստի վարչական մարմնի առջև պատասխանատու յե առանձին անձնավորություն (ուսուցիչ, խօրձիթ-ընթերցարանի վարիչ) հաստատվում է փոստային գործակալություն:

Բայց հարցը նրանումն ե, վոր մենք առայժմս չենք կարող ամեն մի գյուղում հասաւաել ոժանդակիչ փոստային հաստատություններ կամ գործակալություն, ուստի պետք է այգապիսի կետին կցել վորոշ քանակությամբ գյուղեր: Դա կախված է ինարկե նրանից, թե վորտեղ բաց կարվի փոստային կետը և ինչպիսի կառակցության մեջ կլինի փոստային ցանցի հետ:

Ե հարկե, ոժանդակիչ փոստային կետ կամ գործակալություն պետք է հաստատել այնպիսի հիմնարկու-

թյուններին կից, վորոնք հոգում են վոչ թե յուր գյուղի, այլ ամբողջ շրջանի կարիքները։ Այդ պայմանը անվիճելի յեւ։

Այդպիսի հասարակական տեղեր գյուղում ներկայանում են կոռագերատիվը, ուսումնարանը, խրճիթ-ընթերցարանը, գյուղ-խորհուրդը։ Այդ բոլոր տեղերը կարելի յեւ շատ հարմար համարել փոստային կետեր հաստատելու համար։

Վերցնենք որինակ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԸ՝ նրա մոտ գլխավորապես շուկայի որերին (բազարի որերին) գյուղացիք հավաքվում են ամբողջ շրջանից։ Գյուղացին յեկել ե գիցուկ բերելով հետո ցորեն ծախելու, կամ չիթ զնելու համար։ Հենց այստեղ նա անմիջապես կարող ե գնել նամականիշ, ուղարկել կապոցներ և ստանալ յուր հասցեյով ուղարկված փոխադրումը։ Այդտեղ, այսպես ասած բաժանորդը կզա ինքնահոս կերպով։ Բայց լավ կազմակերպված կոռագերատիվը ամեն մի գյուղում ունենում է յուր խանութները. փորտեզից հաճախ դալիս են ապրանք ստանալու։ Ահա այդ խանութից ապրանքի յեկողը կարող ե յուր հետ վերցնել նաև իրենց գյուղի ամբողջ փոստը (այսինքն նամակներ և այլն) կամ իրենց գյուղից տանել կոռագերատիվ ուղարկելու համար։ Այդ ամենից յերեսում ե, վոր կոռագերատիվը յուր խանութներով կարող ե նշանավոր գեր խաղալ՝ փոստային կատի գործում։ Հարկավոր ե միմիայն ունենալ գյուղկոռողների գլխին կանգնած մարդկանց ցանկությունը։

Իբրև փոստային կետ վատ չե նաև ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ. Առաստարակ գյուղի ուսումնարանը ընդգրկում է 3-4 գյուղ։ Նրա հետ այդ գյուղերը կապված են յերեխաների շնորհիվ։ Փոստը կանգնեց ուսումնարանի առջեթեւ չե, աշխատանքը սկսվում ե, այստեղ տրվում են աշակերտների հետ կապված գյուղերի բոլոր լրազրները, ծախում են նամականիշներ և ընդունվում են փոխադրումներ։ Մի գյուղացու շահերը ամեն տեղ կապ ունի

մյուս բոլոր համագյուղացիների շահերի հետ, այնպես վոր յեթե աշակերտին մի նամակ տալ բեռի թորոսին կամ հարեւան Անուշին հանձնելու համար, կարելի յեւ միանգամայն հանգիստ լինել, նամակը տեղ կհասցը վի ժամանակին և բարեխղճորեն։

Մի քիչ գժվար կլինի յերեխային լրազրները տեղ հասցնելու գործի հանձնումը. հաճախ լրազրները գործ կածվեն փաթեթների համար, կամ հոր ծխախոտի թղթի տեղի Բայց ի հարկե, ուսուցչի համար գժվար չի լինի հասկացնել աշակերտին լրազրի նշանակությունը և նրա հետ վարկելու ձեր, իսկ փոխարենը փոստային վարչական մարմինը ամեն տարի այդպիսի պարտաճանաչ և բարեխիղճ աշակերտներին իրոք նվեր կուղարկի գրքույներ։

Տեսնենք ինչով կարող ե ոգտավետ լինել զյուղում փոստային կապը տարածելու գործում ԽԹՃԻԹ-ԸՆԹԵՐ-ՑԱՐԱՆԸ։

Մոտ ապագայում գործը լավ հիմքերի վրա դրվելուց հետո այդպիսին պետք ե գյուղի կուլտուրական կյանքի կենարունը հանդիսանա։ Հարց ե տրվում, ապա ում, յեթե վոչ խրճիթի վարիչին պետք են լրազրը և գիրքը, առանց դրանց այդ վարիչը չի կարող տանել աշխատանք։ Հենց այդ անձնավորությունից ե կախված զլխավորապես շրջանի հետ սերտ կապեր ստեղծելու և այդպիսին պահպանելու գործը։ Յենթազրվում ե, վոր ամեն գյուղում պետք ե խրճիթ-ընթերցարանի բաժանմունքներ բանալ (Կարմիր անկյուններ) խրճիթի վարիչի զեկավարությամբ։ Հաճախելով այդպիսին շաբաթական վոչ պակաս քան յերկու անգամ, այդ խրճիթի զեկավարը կարող ե ուղեկից գյուղերին հասցնել նամակներ և լրազրեր։

Այդ բացի շրջգործկոմներից և գյուղխորհուրդներից, փորուց նշանակությունը փոստային կապի գործում միանգամայն ակներեւ ե։

Բայց այստեղ ես պետք ե մտցնել մի փոքր ուղ-

դումն, — ամեն մի գյուղխօրհուրդում պետք և լինի մի պատասխանառու անձնավորություն, վորի վրա զրված լինի ստացվող թղթակցությունների պահպանումն և հաշվեառումը:

Մեր Միությունը, ունենալով 330,000-ից ավելի գյուղեր, վորոնք ցրված են ահազին ապրածության վրա, առանձնապես կարիք են զգում կանոնավոր փոստային կազի և ի հարկե հիշատակված միջոցները գեռ բավական չեն վորպեսզի մենք կարողանանք ըոլոր գյուղերի փոստային կարիքները հոգալ:

Հենց դրա պատճառով վարչական մարմինը պետք և զիմի մի շարք ուրիշ միջոցների, վորպեսզի թղթակցությունների տեղ հասցնելու գործը կանոնավորել: Դրանցից՝

## ԳՅՈՒՂԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՏԱՐՆԵՐ

Վերև մենք ասացինք, վոր ամեն մի փոստային բաժանմունքին կցվում են մի շարք գյուղեր, վորոնց փոստային կարիքները նա հոգում ե: Գյուղխորհուրդը կարող և վարձել հատկապես մեկին, վորը ամբողջ թղթակցությունը կցրի շրջակա գյուղերը: Միաժամանակ նաև կատարը կարող և վաճառել նամականիշներ, հավաքել տուառման յենթակա թղթակցություններ: յեթե նամակատարը շատ թե քիչ գրադես ե, հետեւապես մի քիչ փորձառություն ձեռք բերելուց հետո նրան կարելի յենանձնել պատվիրաված նամակների ընդունումը: Հիշու նամակատարների գործունեյության վերահսկողությունը ընկառում և այն փոստային բաժնի կառավարչի վրա, վորի շրջանին նա կցված ե:

## ԳՅՈՒՂԱԿԱՏԱՐԱՌԱՇՈՒՆԵՐ ՅԵՎ ԼԻԱԶՈՐՆԵՐ

Այն գյուղերում, վորաեղ չկան վոչ շարժական փոստեր և վոչ գյուղական նամակատարներ, գյուղխոր-

հուրդը վորոշված օրերին առաքում և յուր լիազորին մոտագա փոստային բաժանմումքը, կամ շարժական փոստի կանգառման կեաը իրենց գյուղի նամակները և լրագրերը ստանալու: Լիազորներին տրվելիք լրագրները պետք և զբեկ մի առանձին դրբի մեջ, վորպեսզի հետազայում հնարավորություն լինի ստուգել այդպիսիների տեղ հասցըրվելու ճշտապահությունը:

Մատնանշված փոստային կապակցության ձևերից պետք և վերցնել այնպիսին, վորը ավելի համարվում և տվյալ վայրի շրջապատին: Գյուղում փոստային կապակցության գործը կազմակերպող անձինք պետք և ուսումնասիրեն տեղական ուսումնարանը և խրճիթ-ընթերցարանը, նրանց գործունեության շրջակայքը և գրանցից վորը հարմար կը զանվի, նրան ել տան իրենց հավանությունը, պետք և ավելացնել, վոր չի հերքվում այն յենթագրությունը, վոր հենց ուսումնարանում կամ խրճիթ-ընթերցարանում կարելի յե բանալ փոստային կետեր:

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր գյուղական կապի համար կան փոստային բաժանմունքներ, ոժանդակիչ փոստային կեաեր, խրճիթ-ընթերցարաններին, կոողերատիվներին և ուսումնարաններին կից փոստային գործակալություններ, գործկումների և խորհուրդների լիազորներ ու գյուղական նամակատարներ:

Այսաեղ մենք պետք և շեշտենք, վոր զիսավորը ի հարկե նրանում չե, վորպեսզի փոստային կեաեր հաստատել, այլ նրանում, վոր այդ կեաերի լրագրեր և նամակը տեղ հասցըրվեն յուր ժամանակին: Այլ խոսքերով զիսավորը փոստերի տեղափոխումն ե:

Կապակցության այդ բոլոր ձևերը միանում և լրցնում են միմիյանց: Հիմքը կազմում են փոստային գրասենյակների և բաժանմունքների ցանցը ու նրանց միջև զանվոր փոստային նամակաբանները, բայց շարժական փոստերի կիրամամբ նամակային կփոխվեն մի քա-


նի ուղեկից փոստային հիմնարկությունների դրությունը:

Յենթադրենք, վոր ի-ում շարժական փոստի կիրառումով (Նկ.1) թղթակցությունը նշանակելի կերպով պահպահ է. վորովհետև այն գյուղերը, վորոնք գործում եյին բաժանմունքի միջոցով նրանց փոստային կարիքները հիմա կը հոգա շարժական փոստը, ուրեմն ի-ն պետք է վերակազմել փոստային գործակալության կամ ոժանդակիչ կետի. իսկ կարող է պատահել, վոր ի-ն բավարարվի միմիայն շարժական փոստով։ Այժմս ընդհակառակը, վորեիցե մի գյուղում թղթակցությունների փոխանակումը այնքան ավելացել է, վոր մի ժամյա կանգ առնելով, չի բավարարվի. այդ գեղքում պետք է մտածել ոժանդակիչ փոստի կամ գործակալության հաստատման մասին։

Այստեղ մեզ մնում է մտածել ներքգավառային փոստի կազմակերպման մասին։ Այդպիսին կիրառվել է մինչև այժմս շատ թույլ. որինակ՝ ամբողջ ՍԽՀՄ-ում յերկու հազար շրջգործկոմներ չունեյին փոստային կապակցություն։ Գավառների խոշորացմամբ փոստային կապից գուրկ շրջգործկոմների թիվը մի քիչ իջել է և առագա բյուջետային տարբա ընթացքում վորոշված է ամեն շրջգործկոմներին կից բանալ փոստային կետեր։

Ի հարկե, ներքգավառային փոստեր կազմակերպելիս պետք է դիմել այնպիսի միջոցների, ինչպիսիք են որինակ՝ փոստային գործակալությունները խրճիթ-ընթերցարաններին, ուսումնարաններին և կոոպերատիվներին կից, շարժական ողակաձև փոստերը, գյուղական նամակատարներ և լիազորներ։ Ներքե աեղավորվում ենք ներքգավառային կապի մոտավորապես որինակը։

ՄԻՀԱԿԱԾՆԵԼ շարժական փոստով, որու դական նամակատարներով լեռ (լեռազորներով)




Գավառային քաղաքից սովորական փոստը ուղեվորվելով գեղպի գավառակային կենտրոն Բ. ճանապարհին կատարում է շարժական փոստի պարտականություններ։ Ընդգրկելով նաև Բ գյուղը, Այդ ճանապարհից գուրս զրտնվում են Դ և Մ գյուղերը։ Այդ գյուղերը փոստի կանգ առման կետի հետ, ներկա գեղքում Բ գյուղի հետ,

կապված են զյուղիազորով, վորը, դուրս գալով Մ.-ից, ուղեգործում ե թ և վերցնում ե իրենց և Դ զյուղի փոստը: Բ գավառակային կենտրոնից ԶԲ.-ի և մի շարք զյուղերի միջով անցնում ե ողակաձև փոստը, կատարելով յուր պարտականությունները բոլոր հիշյալ զյուղերում: Բ. զյուղում կա որինակ կոոպերատիվ, իսկ Ս.-ում խրճիթ-ընթերցարան: Բ. կոոպերատիվը ունենալով խանութներ Ա. Բ. Գ. զյուղերում կապ ե պահպանում դրանց հետ հասցնելով նրանց նամակները և լրագրները: Ա.-ի խրճիթ ընթերցարանը կապ ե պահպանում Մ. Դ. և Ն. զյուղերի. կարմիր անկյունների միջոցով. Ո. զյուղը Ա. զյուղի հետ կապվում ե զյուղ-լիազորով:

Զ. զյուղում կա մի գալրոց, վորտեղ հաճախում են յերեխաններ Ղ. Ճ. Հ. զյուղերից: Զ. զյուղի կապը Բ.-ի հետ պահպանու համար ընտրվում կամ վարձվում ե մի նամակատար. կամ ցրիչ, վորը փոստը Բ. գալուց վեցնում ե վերոհիշյալ 5 զյուղերի նամակները և հանձնում ե Գ. Գ. զյուղերին. իսկ մնացյալ 4 զյուղինը հանձնվում ե Զ. զյուղի ուսումնաբանին, վորտեղից ամեն աշակերտ տանում ե իրենց զյուղի նամակները և բաժանում:

Ի հարկե վերեվ հիշված ձեր մուսասամնին ե վերաբերում, իսկ առայժմ Հայաստանում կիրառել անհնարին ե, չնորհիվ մեր զյուղերի աշխարհագրական դիրքի և մի քանի այլ պայմանների: Առայժմ ծրագրվում ե Հայաստանում կազմակերպել վորք ձեի ողակաձև պոստեր: Արինակ Յերևան, Վաղարշապատ, Աշտարակ գծի վրա: Երբեք բերում ենք հիշյալ ձեի որինակը:

### ՈՐԻՆՈՒՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՂԱԿԱՆ ԶԵՎՈՐ ՓՈԽՏԻ



Փոստը Յերեանից գուրս գալով, մեկնում և Վաղարշապատ, ճանապարհին նա փոխանակում և ուղեկից Զափարաբադ և Փարաքար գյուղերի փոստերը: Այդ գյուղերից մի քիչ հեռու գտնվում են Զարբախ և Արաթ գյուղերը, վորոնք կը կապվեն Զափարաբադի կամ Փարաքարի հետ լիազորներով, համաձնարարելով նրանց իրենց թղթակցությունների ստացումը: Վաղարշապատից փոստը կը մեկնի Շահումյան և Ոշական գյուղերով Աշտարակ Շահումյանում կա խրճիթ-ընթերցարան, վորին կհանձնր վեն Հաջիղարա, Դոխս, Հաջիլյար, Ֆրանգանոս, Աղավնատուն, Փաթրինչ և Այրլու գյուղերի թղթակցությունները, նամակատարներով ուղարկելու համար: Ոշականում կա գյուղիորհուրդ, վորի աջակցությամբ կարելի յե կապվել Հղթամուր, Ագարակ և Փարբի գյուղերի հետ: Աշտարակի փոստ հեռագրատան միջոցներով կարելի յե կապվել Մողնի. Կարփի, Ոհանավանք և Յեղվարդ գյուղերի նամակները և լրագրերը:

Հիշյալ միջոցը սկզբնական շրջանում ժամանակավորապես կը կիրառվի, իսկ ճանապարհները նորոգելուց հետո, կարելի յե ավելի զարգացնել փոստը Վաղարշապատից առաքել, Հաջիլար, Շահումյան, այստեղից անմիջապես կանցնի Հաջիղարա, Ֆրանգանոս, Ոշական Հղթամուր Ագարակ, Փարբի, Կարփի և Մողնի գյուղերով Աշտարակ: Իսկ վորպեսզի աննպատակ չվերադառնա ավելորդ անգամ նույն ուղիով Վաղարշապատ, փոստը Աշտարակից անմիջապես Յեղվարդ անցնելով, կմեկնի Յերեվան: Այդպիսով մենք ընդգրկած կլինենք մեր ցանցի մեջ մոտավորապես 14 նոր գյուղեր:

Գյուղական փոստերի ծառայողներից շատերը արգեն գիտակցում են գյուղի և քաղաքի միջև կապ ստեղծելու կարերությունը և վաղուց գաղարել են սպասելուց թե յերբ պետք ե գյուղացին իրենց մոտ գա, հիմա իրենք են նրանց մոտ գնում և միաժամանակ կատարելով փոստային պարտականությունները, վաճառում են գրքեր

բաժանորդագրում են բնակչությունը մի վորեիցե լրագիր, տալիս են զանազան պարզաբանություններ գյուղացուն հետաքրքրող հարցերի մասին: Այդպիսի որինակելի փոստային աշխատակիցների թիվը ավելի և ավելի շատանում է ու հեռու չե այն որը, յերբ նա գուրս կը վանի հետամնաց և խորհրդացին իշխանության խնդիրները չըմբնող գյուղացուն խորթ տարբերին:

Այս գրքույյկի նպատակն ե ոգնել փոստային աշխատակիցներին տեղերում յուրացնել փոստային ապագարապար գյուղին մոտեցնելու բազմատեսակ գործը, տալ նրան հնարավորություն բացատրել իրեն գոչ թե միայն վարչական մարմնի հետապնդվող նպատակի կարևորությունը, այլ և այս կամ այն գյուղում փոստային կետեր բանալու ինքըին մոտենալու միջոցները:

Վարչական մարմնի ամեն մի մտածող գիտակից, վորը պարտավոր ե ինամբ տանել գյուղի և իրեն խընտամքին հանձնված հիմնարկության միջև կապ ստեղծելը, այս գրքույյկում գրվածով ոգտվելով, կաշխատի կազմել յուր շրջանի կապակցության գործի սխեման և կիրառել այդպիսին կյանքում:

Այս գործը պետք ե արվի ամեն մի փոստային գրասենյակում և ամեն մի բաժանմունքում ու ինչպես բոլոր կարելոր գործերը պետք ե արվի անհապաղ:

Շրջգործկոմներին գյուղսորհություններին, կոոպերատիվներին, ուսուցիչներին և խրճիթ-ընթերցարանի վարիչներին այս գրքույյկը պետք ե տա տարրական հասկացողություն այն մասին, թե ինչ ուղիով փոստը պետք ե մոտենա գյուղին և վորն ե հիշյալ ուղիներից ավելի համապատասխան, ինչ գործերում փոստը կարող ոգտավետ լինել նրանց և ինչում նրանք փոստին:

Առանձնապես մեծ ոժանդակություն մենք հույս ունենք ստանալ գյուղական կուսակցական և Յերիտմիությունների բջիջներից:

Յեթե փոստի, գյուղի. կոոպերացիայի և ուսումնա-

բանի աշխատակիցները այս հարցերը վերլուծության յենթարկեն և զրքույլը կարդալուց անցնեն զյուղական կապի իրագործման, հետևապես զրքույլի նպատակը կարելի յե համարել իրագործված:

Փոստը ամեն տեղ մուտք կդանի Խորհրդային Հանրապետությունների լայնածավալ տարածության վրա դասավորված գյուղերը, լրագիրը, զիրքը և նամակը կողնեն ամրացնելու գյուղի և քաղաքի աշխատավորների միությունը:

## Փոստային սակագին

Փոստային թղթակցությունները վճարվում են փոստային նամականիշներով հետևյալ առժողությամբ՝

### ՀԱՍՏՐԱԿ ՆԱՄԱԿՆԵՐ ՅԵՎ ՓՈՍՏ-ՔԱՐՏԵՐ

ա)	Տեղական նամակը ամեն մի 20 գրամ . . . . .	4 կոպ.
»	» հետեւյալ 20 » . . . . .	2 »
»	» Մոսկայի և Լենինոգրադի նամար 20 գրամ . . . . .	5 »
»	» հետեւյալ 20 » . . . . .	3 »
բ)	Այլ քաղաքների նամակները 1-ն 20 գր. . . . .	7 »
»	» » հետեւյալ 20 » . . . . .	5 »
գ)	Փոստային քարտեր . . . . .	3 »

### ԲԱՆԴԵՐՈՒԱՅԻՆ ԱՌԱԳՈՒՄՆԵՐ

Տպագրված աշխատություններով բանդերուներ (գրեթե, լուսաւելարներ, ֆուռագրություններ, ալբոմներ, կատալոգներ յեվ այլն)

ա)	Տեղական ամեն մի 50 գրամ . . . . .	1 կոպ.
բ)	Այլ քաղաքներին 50 »	2 »

Բանդերուներ պատճենական թրերով (գատական կամ նոտարական արձանագրություններով, հոդային սահմանների հատակագծերով, ապրանքներով յեվ նման նյութերով) ու ապրանքների նմուշներով կտորեղէների, սերմերի յեվ այլն)

ա)	Տեղական ամեն մի 50 գրամը . . . . .	2 կոպ.
բ)	Այլ քաղաք « » » . . . . .	4 »

Բայց պաշտոնական թղթերով բանդերուների մինիմյալ վճարն է

ա)	Տեղական . . . . .	3 կոպ.
բ)	Այլ քաղաքների . . . . .	5 »

Ապրանքների նմուշների բանդերուների ամենացածր վճարն է

ա)	Տեղական . . . . .	4 կոպ.
բ)	Այլ քաղաքների . . . . .	9 »

## ԲԱՆԴԵՐՈՒՆԵՐ ԿԱՐԴԱՑՎԱԾ ԼՐԱԳՐՆԵՐՈՎ

- ա) Տեղական ամեն մի 50 գրամը . . . . . <sup>1/2</sup> կոպ.  
բ) Այլ քաղաքներինը » » . . . . . 1 »

## ՊԱՏՎԻՐՎԱԾ ՁԵՎԻ ԱՌԱՐՈՒՄՆԵՐ

Բացի քաշագինը պահանջվում է նաև պատվիրման  
վճար . . . . . 7 կոպ.

## ՆԱՄԱԿՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԱՐԺԵՔՈՎ

- ա) քաշագին հասարակ նամակների սակագնով և բացի  
դրանից  
բ) ապահովագրման վճար նայած առաքման տարածության,  
այսինքն թե նամակը ուր և ուղարկվում՝  
Տարածությամբ մինչև 500 կիլ. 0,4% ընդհ. գում.  
» 500 կիլոմ. ավելի մինչև 1000 » 0,8% » »  
» 1000 » » » 2000 » 1,2% » »  
» 2000 » » » 3000 » 1,6% » »  
» 3000 » » » 2 0 0 » »  
Ամենացածր ապահովագրականը . . . . . 20 կոպ.

## ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱԳՐՈՒՄՆԵՐ

- ա) Դրամական փոխագրումներից զանձվելիք փոստային  
վճարի չափը կախված է նրանից, թե ուր և ուղարկվում  
փոխագրումը, այսինքն տարածությունից և ուղարկ-  
վելիք գումարի չափից:  
Տարածությամբ մինչև 500 կիլ. 0,2% ընդհ. գում.  
» 500 կիլոմ. ավելի մինչև 1000 » 0,4% » »  
» 1000 » » » 2000 » 0,6% » »  
» 2000 » » » 3000 » 0,8% » »  
» 3000 ավելի . . . . . 1 0 0 » »  
Փոխագրման ամենացածր վճարն է . . . . . 15 կոպ.  
Այսինքն որինակ՝ ուղարկումը կատարվում է  
Գումարով 25 ռ. տարած. մինչև 2000 կիլ. պետք է վճար. 15 կ.  
» 50 ռ. » » 500 » » » 15 կ.  
» 50 ռ. » » 1000 » » » 20 կ.  
» 100 ռ. » » 500 » » » 20 կ.  
» 100 ռ. » » 1000 » » » 40 կ.  
և այլն:

- բ) Հեռոգրով ուղարկվելիք փոխագրումներից փոստային  
փոխագրման վճարից զատ պահանջվում է նաև  
500 ռ. փոխագրելում . . . . . 1 ռ. 35 կ.  
500 ռ. ավելի » » » » 1 ռ. 65 կ.

## ԿԱՊՈՑՆԵՐ (ՊԱՍԻԼԿԱՆԵՐ)

- ա) Կապոցներից պահանջվում է կշռավճար ըստ տարածու-  
թյան՝

Մինչև	100 կիլոմ.	. . . . .	1,5 կոպ.	մեկ կիլոգրամից
100 կիլոմ. բարձր մինչև 150 կիլոմ.	2,5 »	» »	» »	
150 » » » 200 » » 3,5 » » » »				
200 » » » 300 » » 5 » » » »				
300 » » » 400 » » 6,5 » » » »				
400 » » » 500 » » 7,5 » » » »				
500 » » » 600 » » 8,5 » » » »				
600 » » » 700 » » 10 » » » »				

և այլն:

- Ամեն մի կապոցի մինիմալ վճարը . . . . . 25  
Որինակ կապոցը բարձր և 16 կիլոգ. (39<sup>1/4</sup> ֆ.) տարա-  
ծությամբ 100 կիլոմ. . . . . 25 կոպ.  
Նույն կապոցը տարածությամբ 200 կիլոմ. . . . . 56 »  
» » » » » 500 » » 1 ռ. 20 »  
Կամ կապոցը 3 կիլոգ. (12<sup>1/4</sup> ֆ.) տարածությամբ  
300 կիլոմ. . . . . 25 »  
Նույն կապոցը տարածությամբ 500 կիլոմ. . . . . 38 »  
և այլն

- բ) Արժեքը հայտարարված կապոցներից բացի հիշյալ կը շ-  
ռավճարից պահանջվում է նաև ապահովագրական զանձա-  
նացների տարածության և հայտարարված արժեքի գումարին՝

Տարածությամբ	մինչև	500 կիլոմ.	0,4%
»	500 կիլոմ. ավելին »	1000 »	0,8%
»	1000 » » » »	2000 »	1,2%
»	2000 » » » »	3000 »	1,6%
»	3000 ավելի . . . . .	2 0 0 »	2 0 0

- Կապոցներից զանձվելիք ապահովագրական վճարի  
մինիմալ գումարն է . . . . . 20 կոպ.

- զ) Յեթե կապոցը ընդունվում է զոչ յերկաթուղարձին մոտ  
փոստային հիմնարկում և հետևապես պետք է ուղարկել

մինչև մոտագա յերկաթուղային կայանը պահանջվում  
և լրացուցիչ վճար այսպիսին տեղ հասցնելու հա-  
մար . . . . . 10 կոպ.

Յեթե բացի դրանից կապոցը ուղարկվում և յերկա-  
թուղագծից զուրս վայը, այսինքն առաքումը յերկու  
կողմից ել կատարվում և փոստային ուղիով, պահանջվում է 20 դ.

### ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հասարակ տեղեկության համար . . . . . 7 կոպ.

Պատվիրված ձեի տեղեկությունից . . . . . 14 »

### ԱՌԱՋՈՒՄՆԵՐ ՎԵՐԱԴԻՐ ՎՃԱՐՈՎ

Զվարված կամ վոչ լրիվ վճարված նամակներից և փոստ-  
քարտերից ու բանդերուներից, փոստային արկղից հանված,  
հասցեյատերից գանձվում և տվյալ առաքման վճարը պատվիր-  
ված թղթակցությունների գումարով:



198

11  
23975